



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17 FEB 2010

ՊԱՄՅԱԿԻ 4-րդ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆ 1932 թ.

336.5
Հ - 72

1. ԵՐԵՎԱՆԻ ՄԵՒԲ ՄԱՅԻՍԱԼԻԲՍԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Կոմունիստական կուսակցության ղեկավարութեամբ մեր յերկրի բանվոր դասակարգն ու աշխատավորական մասսաները, տնտեսական և կուլտուրական շինարարութեան բոլոր բնազավառներում ձեռք բերին մեծազույն հաղթանակներ :

«Սոցիալիստական շինարարութեան հաջողութունները, հնգամյակի հաջողութունները, այնչափ ակնհայտ են, վոր չեն կարող առաջ չբերել կազիտալիստական աշխարհի հարկադրական խոստովանութունը : Զարիջարված հանդիսացավ մեր անկուլտուրական հետամնացութեան կաղերքի պակասի դրույթը : Զարիջարվեցին պրոլետարիատի և միջակի դաշինքի խզման հույսերը :

ԽՍՀՄ-ի չտեսնված արդարութեամբ հետամնաց յերկրից, աղբարային յերկրից դառնում և առաջադեմ յերկրի՝ խոշոր ինդուստրիայի յերկիր» . (ՀԿԿ . 16 համ .) :

Տնտեսական շինարարութեան հաջողութուններում վորոշոցն և հանդիսանում մեր խոշոր սոցիալիստական արդյունաբերութեան զարգացումը — առաջին հերթին արտադրութեան միջոցներ արտադրող և ժողովրդական տնտեսութեանը նոր, հզոր տեխնիկական բազայով վերազինող բնազավառները :

Այժմ արդեն Խորհրդային Միութեանը, մի շարք բնազավառներում, տեխնիկական, տնտեսական տեսակետից հասել և անցել և կապիտալիստական յերկրներին :

ԽՍՀՄ-ն ամխի արդյունաբերութեամբ 1931 թ. բռնեց չորրորդ տեղն աշխարհում՝ անցած տարվա արդյունաբերութեան ընդհանուր գումարը գերազանցելով 14% -ով այն ժամանակ, յերբ Ամերիկայում ամխի արդյունաբերութեան ընկավ 17% -ով, Գերմանիայում 16% -ով, Անգլիայում 10% -ով և այլն :

Նավթարդյունաբերութեամբ ԽՍՀՄ-ը բռնեց յերկրորդ տեղը, ավելացնելով իր արդյունաբերութեանը 1931 թ. 22% -ով, այն ժամանակ, յերբ Վենեսուելայի (նավթի արդյունաբերական խոշորագույն յերկիրը) նավթի արդյունաբերութեան ընկավ 13% -ով, իսկ Ամերիկային 5% -ով :

Թուղի (չուգունի) ձուլմամբ ԽՍՀՄ դրավում և յերրորդ տեղը, անցնելով Անգլիայից, Գերմանիայից և մոսկնալով Ֆրանսիայի արտադրութեանը :

Հնգամյակի կատարման համար տարած պայքարի տարիներում, մենք կառուցեցինք սոցիալիստական արդյունաբերութեան հարչորակ վոր խոշորագույն գիգանտներ — Մագնիտոգոբսիլու և Կուզնեցկի մետա-

դադարձական հսկաները, Ստալինգրադի և Խարկովի արահատրային գործարանները, Ստալինի անվան Սվետ գործարանը: Գործի յն դըր-ված աշխատի կոմբինատներ, ինչպես Բերեզնյակինը, Վոլխովսկին. հզոր Գնեսլայան հիդրոէլեկտրակայանը տալիս և արդեն առաջին հոտանքը:

Իրագործվում է կյանքում կուսակցության և բանվոր դասակարգի պլանավոր լողունը— «կատարել հնգամյակը չորս տարում»: Նավթի, մեքենաշինարարության, էլեկտրոտեխնիկայի հնգամյա պլանը կատար-ված է 2—3 տարում: 1932 թ. սկսվել նախատեսում է հնգամյակի լրիվ կատարումը չորս տարում, ժողովրդական տնտեսության բոլոր կա-րեվորագույն բնագավառներում: Արդյունաբերության ընդհանուր ար-տադրանքով մենք այս տարվա վերջում պետք է ունենանք 101%, իսկ արտադրության միջոցներ արտադրող բնագավառներում 110%—ի ար-տադրանք, վորպիսիք նախատեսվում էր ստանալ հնգամյակի վերջում:

«Հնգամյակը չորս տարում կատարելու համար տարվող պայքարի հաջողություններն իրենց արտահայտություն են դոնել սոցիալիզմի հաղթական կառուցման մեջ ԽՍՀՄ-ում: Սոցիալիզմի այս հաջողու-թյունների հիմքն են հանդիսանում ինդուստրացման քաղաքականու-թյունը, ծանր ինդուստրիայի վերելքն արտադրության միջոցների ար-տադրության ծավալումը:

Նախընթաց չըջանում մեր ծանր արդյունաբերությունը հաստա-տապես փոքրի յե կանչնեցված: և գրանով իսկ սեփական պատվանդան և ստեղծված ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար, պատվանդան՝ սոցիալիստական խոշոր ինդուս-տրիայի համար» (17 կուս կոնֆ. բանաձևերը):

Այս հաջողությունների հիման վրա, հիմնվելով բանվոր դասակար-գի և չքավորության ու միջակի դաշինքի զարգացող ակտիվության վրա, կուսակցությունն ընդհուպ մոտեցավ գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման:

Գյուղացիության չքավոր-միջակ հիմնական մասաները վերջնա-կանապես դարձան ղեպի կոլեկտիվացման, սոցիալիզմի ուղին:

Կոլեկտիվացման, խորհանտեսությունների ծավալման, մեքենա-տրակտորային կայանների հզոր ցանցի ստեղծման հիման վրա, գյու-ղացիական տնտեսությունում իշխող դրությունը արավեցին սոցիալիս-տական ձևերը:

Մանր և փոշիացած հողագործության յերկրից Խորհրդային Միու-թյունը դարձավ աշխարհի ամենախոշոր հողագործության յերկիրը, կոլտնտեսականը այժմ հանդիսանում է խորհրդային իշխանության իս-կական և ամուր հենարանը գյուղում: Համատարած կոլեկտիվացման հիման վրա հաջող կերպով իրականացվում է կուլակության, վորպես դասակարգի լիկվիդացիան, նախորոշելով կապիտալիստական տարրերի:

Սոցիալիստական ինդուստրացման վերելքը, գյուղական տնտեսու-թյան հիմնական վերափոխումը նոր հիմքերի վրա, անցնում է յին աչ-խատավորության լայն մասսաների նյութական և կուլտուրական դրու-թյան անշեղանակումը և բարելավումը:

Մեր յերկրում ամբողջապես վերացված է գործադրությունը, ա-վարտվում է բոլոր բանվորների 8 ժամվա բանորից 7 ժամվան անցնելը: Բանվոր դասակարգի թիվը 2,430 հազ. նոր տնտեսական քաղա-

բականություն սկզբից աճել է մինչև 12 միլիոն մարդ 1932 թվին, իսկ տարվա միջին աշխատավարձն այժմ 71,2%-ով բարձր է 1928 թվից:

Մեր յերկրում գյուղացիությունն ընդմիշտ ազատվել է կարվածա-տիրական բուրժուա-կուլակային շահագործումից, կանգնելով կուլտուր-չինարարության ճանապարհի վրա:

Մեր յերկրում աճում և ամրանում է սոցմբցումն ու հարվածաչ-նությունը, շինարարության շարժման մեծագույն ուժը, վոր հանդի-սանում է բանվոր դասակարգի և կոլտնտեսականների աննկուն կամքի արտահայտությունը սոցիալիզմի հաղթանակի նկատմամբ:

Մենք ճեղք բերեցինք խոշորագույն հաջողություններ շինարարու-թյան բնագավառում, ավարտեցինք սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, լուծեցինք յենինյան «ով-ում»-ի հարցը հոգուտ սոցիալիզմի ընդդեմ կապիտալիզմի քաղաքում և գյուղում լրիվ և անվերադարձ կերպով:

Կուսակցության գլխավոր դժի հիման վրա մենք ջախջախեցինք կապիտալիստական դասակարգերի մնացորդները. սոցիալիստական հարձակման կազմալուծողները—աշերի և «ձախերի» ղեմ անողոք պայ-քար տանելով, մեր սոցիալիստական շինարարությունը դարձավ հզոր և անհաղթ ուժ, վոր ստեղծում է հաղաբավոր զիջանաներ, հարյուր հաղաբավոր կոլտնտեսություններ, կազմակերպում է միլիոնավոր հար-վածայիններ և տանում է մեզ ղեպի նոր, համաշխարհային պատմական նշանակու-թյուն ունեցող հաղթանակներ:

2. ԽՆԱՅՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԵԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ՄԻՋՈՑ-ՆԵՐԸ—ՎՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ԱՂԻՅՈՒՐ

Սոցիալիստական ինդուստրացման զարգացումը, գյուղական տըն-տեսության մեջ առաջատար տեխնիկայի ներդրումը, աշխարհում ամե-նաուժեղ արտադրողական ուժերի ստեղծումը, մենք իրագործում ենք բացառապես ներքին միջոցների, սոցիալիստական կուսակման, սեփա-կան աղբյուրների հաշվին:

«Պատմությունը գիտի ինդուստրացման զանազան միջոցներ: Ան-գլխան ինդուստրացվել է շնորհիվ նրա, վոր նա տանյակ և հարյու-րավոր տարիներ կողոպտել է զաղութները, ղերել է այնտեղ «լրացու-ցիչ կապիտալներ»: Ներդրել է այդպիսիք իր արդյունաբերության մեջ և արագացրել իր ինդուստրացման տեմպերը:

Սա ինդուստրացման մի միջոցն է:

Գերմանիան արագացրել է ինդուստրացումն անցյալ դարի յոթա-նասնական թվականներին Փրանսիայի հետ հաղթական պատերազմ տա-նելու հետևանքով, յերբ նա Փրանսիացիներեց վերցնելով հինգ միլիարդ ֆրանկ (փոսի ֆրանկը հավասար է 37 կ.) կոնտրիբուցիա, ներդրեց այդպիսին իր արդյունաբերության մեջ:

Սա ինդուստրացման յերկրորդ միջոցն է: Այդ յերկու միջոցներն էլ մեզ համար փակ են, քանի վոր մենք խորհուրդներ յերկիր ենք և դադուլթային կողոպուտներն ու ոստիական հափշտակումները կողո-պուտների նպատակով, անհամատեղելի յեն Խորհրդային իշխանության յնույթի հետ:

ՊՈՅՈՒՆ

Ռուսաստանը, Հին Ռուսաստանը, ստրկացնող կոնցեսիաներ եք տալիս և ստրկացնող փոխառութիւններ եր ստանում և աշխատելով աշխատելով, աստիճանաբար դուրս գալ ինդուստրացիան ճանապարհը :

Սա յերրորդ միջոցն է : Բայց սա ստրկացման կամ կիսաստրկացման միջոցն է, Ռուսաստանը կիսագաղութ դարձնելու միջոցը :

Այս ուղին նույնպէս փակ է մեզ համար, քանի վոր դրա համար չէր, վոր մենք ունեցանք յերեք տարվա քաղաքացիական պատերազմ յետ մղելով բոլոր և ամեն տեսակի ինտերվենտներին, վորպէսզէ հետո՝ ինտերվենցիստներին հաղթելուց հետո, կամավոր կերպով դնանք ստրկանալու իմպերիալիստներին :

Մնում է ինդուստրացիան չորրորդ ուղին, սեփական խնայողութիւնները ուղին, արդյունաբերութեան դործի համար, սոցիալիստական կուտակման ուղին, վորի վրա քանիցս նշել է Լենինը, վորպէս մեր յերկրի ինդուստրացիան միակ ուղի» :

Այս չորրորդ ուղին, սոցիալիստական ինդուստրացիան ուղին, իրագործվում է բայելեիկյան պայքարով կուտակումների համար՝ արդյունաբերութիւնում, դուրստեստեսութիւնում, արանսպորտի մեջ, լայն աշխատավոր մասսաների միջոցների ներդրումամբ :

Սորհրդային Միութեան Ֆինանսները դրված են սոցիալիստական շինարարութեան դրամական միջոցների կազմակերպումն սպասարկելու, սոցիալիստական ինդուստրացիան հսկա պլանները կատարելու համար :

Սոցիալիստական շինարարութեան կարիքները համար, միջոցների մորելիցայի ֆինանսական սիստեմի միջոցով, Սորհրդային Միութեան մեջ, հենվում է ժողովրդական յեկամտի հսկայական աճման վրա, վորպիսին չի կարող ունենալ կապիտալիստական և վոչ մի ամենահասրուստ պետութիւն :

Կապիտալիստական յերկրներում հետպատերազմյան շրջանի ժողովրդական յեկամուտը տարեկան աճում է տալիս լավագույն դեպքում 2% : Մի շարք կապիտալիստական յերկրներում ժողովրդական յեկամտի աճման տեմպն ավելի պակաս է :

Մոտավորապէս սյգպէս եր աճում նաև մինչհեղափոխական Ռուսաստանի ժողովրդական յեկամուտը : ՍՍՀՄ-ում ժողովրդական յեկամուտը 1929 թ. աճեց 11,5%, 1930 թ-ում համարյա 20 տոկոս, 1931 թ. ժող. յեկամուտն աճեց մոտ 30 տոկոս : Ժողովրդական յեկամտի աճման նման տեմպերը հնարավոր են տեսնութեան միայն սոցիալիստական կազմակերպման ժամանակ, վորը բացասում է ժողովրդական տնտեսութեան կապիտալիստական կողոպուտը :

Ի տարբերութեան կապիտալիստական յերկրների, վորտեղ ֆինանսներն սպասարկում են իմպերիալիստական քաղաքականութեան, բանվոր դասակարգին ճնշելու կիսագաղութային և դաղութային յերկրների աշխատավորութիւնը թալանելու քաղաքականութիւն, պատերազմներ նախապատրաստելու և նոր շուկաներ դրավելու համար, ՍՍՀՄ պետական բյուջեն զորեղ լծակ է հանդիսանում ժողովրդական տնտեսութեան, նոր սոցիալիստական հիմունքներով բարձրացնելու համար :

«Միլիտարիզմը և պարտքերի մարումը, վոր իր գերակշռող մասով կապված է դարձյալ միլիտարիզմի հետ, պատում են ժամանակակից

կապիտալիստական պետութիւնների բյուջեները : Անգլիան այդ նպատակների համար ծախում է իր բյուջեյի մոտ կեսը, Ֆրանսիան կեսից շատ ավելի : Իտալիան և Լեհաստանը մոտ 40 տոկոսը :

ՍՍՀՄ-ի պաշտպանութեան և ներքին փոխառութիւններ մարելու ծախսերը չեն գերազանցում 1931 թ. նրա պետական բյուջեյի 8 տոկոս» (Գրինկո) :

Սոցիալիստական շինարարութեան համար միջոցների մորելիցայի հնարավոր է այն պատճառով, վոր նա հենվում է ՍՍՀՄ աշխատավոր մասսաների, մեր կոմունիստական կուսակցութեան և կառավարութեան զլխավոր դժին տաճած անսահման հավատի և համակրանքի վրա :

Մեր ֆինանսները կարեորագույն բաղկացուցիչ մասն են հանդիսանում պետական փոխառութիւններն ու խնայողքամարկղները, վորոնց սմանգտկութեամբ սոցիալիստական շինարարութեան դործի համար, հաշվաքվում են աշխատավորութեան խնայողութիւններն ու ազատ միջոցները :

Մեր պետական փոխառութիւններն ու խնայողքամարկղները հենվում են ժողովրդական մասսաների խնայողութեան վրա. մեզ մոտ փոխառութիւններն ու խնայողքամարկղները—բաղմամիլիոն աշխատավոր մասսաների պայքարն է—սոցիալիստական շինարարութեան զորեղ ալլյուանների ստեղծման համար :

Նրանց, բուրժուազիայի մոտ, փոխառութիւնները—դա մի խումբ կապիտալիստների հարստացումն է, վորոնք փոխառութեան միջոցներն սպասարկում են ժողովրդական մասսաների ստրկացման ու շահագործումն ուժեղացնելու համար :

Իրենց խնայումներն ու ազատ միջոցները հանձնելով փոխառութեանը և խնայողքամարկղներին, մեր յերկրի աշխատավորները ղետեն, վոր նրանք աշխատելիք փոխարինաբար հանձնում են իրենց պետութեանը, վոչ թէ պատերազմական նպատակների համար, այլ նոր գործարաններ, յերկաթգծերի, հիվանդանոցների, դպրոցների խաղաղ շինարարութեան համար :

Նրանց, կապիտալիստների մոտ, փոխառութիւնները — դա պատերազմական արդյունաբերութեան ֆինանսավորման հարատև աճումն է, դա նոր ինքնաթիւներ, թնդանոթներ, իմպերիալիզմի տանկաներն են, վորոնցով բացելուց հարձակում է պատրաստվում Սորհրդային Միութեան վրա :

Մեր յերկրի աշխատավոր մասսաների մասնակցութիւնը սոցիալիստական ինդուստրացիան ֆինանսավորմանը պետական փոխառութիւնները և խնայողքամարկղները միջոցով հանդիսանում է ժողովրդական տնտեսութեան շինարարութեան պլանների կատարման ամենակայական պայմաններից մեկը :

Մեր ներքին պետական վարկի զարգացումը, առանձին թափ ստացավ ինդուստրացիան և ապա «հնգամյակը չորս տարում» փոխառութիւնների բաց թողումով :

Մեր փոխառութիւնների աճումը, վերջին տարիներում, բնութագրվում է հետեյալ թվերով

	Ինդ- 1-ին փոխա- սույթ.	Ինդ- 2-դ փոխա- սույթ.	Ինդ- 3-դ փոխա- սույթ.	«Հնդամ- յակը 4-տար-» փոխ.	«Հնդամյակը 4 տարում» փոխառու Թ- 2 բաժի՝
Քանիոր ծառայողներ	113	415	671	706	1,44
Գյուղացիներ	10	45	206	272	4
Այլ բնակչություն	77	47	64	69	11
Ընդամենը՝	200	507	941	1047	2030

Մեր ներքին պետական վարկի զարգացման այս հակայական հաջողությունները վկայում են աշխատավորական լայն մասսաների ստեղծարար նստուղիակով: Նրանց անսպառ վստահությունը կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության քաղաքականության նկատմամբ:

Ժողովրդական վողջ տնտեսության բուռն աճը, աշխատավորության դրամական յեկամուտների խոշոր աճումը, գործազրկության վերացումը, աշխատավոր մասսաների—սոցիալիստական ինդուստրացման ակտիվ ոգնություն ցույց տալու — ցանկությունը, հնարավորություն ստեղծեցին նախընթաց տարիներում գերակատարելու հնգամյա պլանի նախատեսումները պետփոխառությունների դժով:

1928-29 և 1929-30 թվերին պլանով պետք է մտնել 1.750 միլիոն—մուսքը յեղով 2.500 միլ. ուրբի: 1931 թ. բյուջեյին և հանձնված 1.600 միլիոն ուրբի—300 միլիոնով ավելի, քան նախատեսված գումարը:

Խոշոր հաջողություններով և տարված «Հնդամյակի յերրորդ վրձուական տարվա» փոխառության տարածումով—33 միլիոն աշխատավորներ փոխառության մեջ մտցրեցին ավելի քան 2 միլիարդ ուրբի, դրանով իսկ ապահովելով ժողովրդական տնտեսության 1931 թ. պլանի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման պլանի ֆինասավորումը:

Պետական փոխառությունների և խնայողործի, կապիտալիստական յերկրների համար, չտեսնված և բուռն զարգացումը, վորոչեց բոլոր այդ աղբյուրների տեսակարար կշիռ ավելացումը ԽՍՀՄ պետական բյուջեյի և սոցիալիստական ինդուստրացման ֆինանսավորման մեջ:

1931 թվի փոխառության և խնայողամարկղների միջոցները, —արդյունաբերության հիմնական ներդրումների մեջ կազմում էին 21,9 տոկոս, 1932 թ. 31,1 տոկոս, հնդամյակի չորրորդ ավարտական տարում, նախադժված և փոխառությունների և խնայողամարկղների միջոցով պետական բյուջեն հավաքել 3,3 միլիարդ ուրբուց ավելի: Այդ միջոցներով կարող են կառուցվել տասնվեց Գնեպրոչեն կամ հինգ Մագնիտոչեն:

Պետական փոխառությունների հետ միասին, բնակչության միջոցների ներգրավման խոշորագույն լծակ են հանդիսանում խորհրդային աշխատավորամարկղները:

Բնակչության լայն մասսաների յերկարատև խնայումները մարիլիպացիայի յենթարկող պետական փոխառություններից, խնայողամար-

կղները տարբերվում են նրանով, վոր նրանք ներգրավում են աշխատավորության ժամանակավորապես ապատ և ընթացիկ միջոցները:

Մեր խնայողամարկղներն աշխատավոր մասսաներին հնարավորություն են տալիս, իրնց և պետության համար ոգտակար ձևով, սահելու իրենց մանր խնայումներն ու ժամանակավոր վճարումները և դրամական հաշվարկներ կատարել մասսայական վճարումներով, պետական, կոմունալ և այլ հիմնարկների հետ:

Ապա միջոցների և խնայողությունների պահումը խնայողամարկղներում, տալիս և ամենամեծ ոգուտը և համոզում և դրամի անձեռնմխելի լինելու համար: Այսպիսի զաղտնիքը, խնայողամարկղում յեզած գումարի համար ավանդատույին տրվող 8 տոկոս ավանդատույի իր կարգադրությունամ անդրամային վճարումներ կատարելու իրավունքը, մեծ առավելություններ են տալիս խնայողամարկղներին յլորպես աշխատավորի դրամապանակ (КОМЕТЕК) և դրամարկղ ոգտագործելու համար:

Ինչը տարվա իրենց գոյություն ընթացքում ԽՍՀՄ խնայողամարկղները ներգրավել են 23 միլիոն ավանդատուներ և մեկ միլիարդից ավելի ավանդ:

Ի տարբերություն ցարական Ռուսաստանի խնայողամարկղներին, վորոնք ավանդատուներ էյին ներգրավում բացառապես բնակչության վերին և ունեւոր խավից, մեր խնայողամարկղներն իրենց աշխատանքում հենվում են քաղաքի և գյուղի աշխատավոր լայն մասսաների վրա:

Մեր փոխառությունները և խնայողամարկղները պետք և դառնան սոցիալիստական շինարարության ֆինանսավորման ավելի հզոր աղբյուր:

3. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Մեր շինարարության հակայական հաջողությունների սոցիալիստական այդյունաբերության, գյուղատնտեսության, ֆինանսների բուռն աճման և ամբապնդման կողքին—կապիտալիզմի յերկրներում, ավելի և ավելի խորանում և սրվում և քաղաքական—տնտեսական ճրգնաժամը, ավելի ուժեղանում և կապիտալիստական տնտեսության քայքայումը:

Ամեն ոք փակվում են նոր ու նոր գործարաններ և ֆաբրիկաներ: Արդեն կապիտալիստական յերկրների բանվորության 1/3-ից ավելին դուրս և չպրոված արտադրությունից, բանվորության կեսից վոչ պակասը գործազուրկ են:

Յեվրոպայում, ՀԱՄՆ-ում ավելի քան 40 միլիոն գործազուրկներ կան, ավելի և ավելի իջեցվում և աշխատավարձը. ՀԱՄՆ-ում մեքենաշինարարության դժով աշխատավարձը վերջին յերկու տարում իջել է 62,3 տոկոս, մետաղաբյուրեղների—59,9, Գերմանիայում—մետաղաբյուրեղների մեջ աշխատավարձն ընկել է 43,6 տոկոս, շինարարական արդյունաբերության մեջ՝ 43,3 տոկոս:

Վոչ պակաս սրություն հանդես և գալիս ճգնաժամը և դյուղանտեսության մեջ:

Ցանքի տարածությունների կրճատումը, հոգադործության արտա-

զբանքի գների անկումը, մանր և միջակ գյուղացիութեան մասսայական քայքայումը հասան հսկայական չափերի :

Կապիտալիստական տնտեսութեան համար կատասարոֆիկ արագութեամբ, կրճատվում է միջազգային ապրանքաշրջանառութեանը, ավելի խորքից և լայնորեն յերևում և վարկա-գրտմային սխտեմը, սլաթում են խոշորագույն կոնցեսիոները, բանկերը, համաշխարհային կոմպերիսիզմի սյուները :

Ճգնաժամից կապիտալիստներն յեղնելու սլաթարը, իր ցոյտուն արտահայտութեանն և դանում ավելի շատացող գործազրկութեան, բանվորների աշխատավարձի կարուկ իջեցմամբ, ինֆլիացիայի քաղաքականութեան մեջ, վար իրեն հետևից բերում է աշխատավոր մասսաների նյութական գրուութեան ավելի շատ վատացումն :

Սակայն այդ ճանապարհով ճգնաժամից դուրս գալու փորձերը վոչ միայն չեն վերացնում, այլ ավելի շուտ ուժեղացնում են կապիտալիստական տնտեսութեան կատասարոֆիկ գրուութեանը : Յեվ դրա հետ միասին ղեկավարող են իմպերիալիստական կլիկաները, վորոնք շատ ավելի մտածում են պատերազմի, վորպես ճգնաժամից դուրս գալու միջոցի, մասին, առաջին հերթին խորհրդային յերկրի դեմ պատերազմելու, իՍՂՄ հաչվին ճգնաժամից դուրս գալու և կիսազաղութային ու գաղութային յերկրների ժողովուրդներին հետագա կողոպուտներին մասին :

Իմպերիալիզմի ամբողջ միջազգային քաղաքականութեան մեջ «սկըսում է գերակշռել իՍՂՄ տնտեսական կապերը կապիտալիստական յերկրների հետ կարելու քաղաքականութեանը, պրովոկացիոն հարձակումներ իՍՂՄ-ի վրա, բայց և ծածկված աշխատանք իՍՂՄ դեմ ինտերվենցիա կազմակերպելու համար» (Ստալին) :

Այս պայմաններում սլաթարը ուսումնական սպանությունների դեմ, սլաթարն ազատութեան պահպանելու նպատակով, իՍՂՄ համար հանդիսանում է խոշոր կարևորութեան ներկայացնող գործ : Այդ սլաթարը սլաթար է միաժամանակ իՍՂՄ տնտեսական հզորութեան և նրա սլաշտպանունակութեան ամբողջման համար :

4. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻՍՂՄ-ում սոցիալիզմի կառուցման բայլելիկյան սլանի գործնական իրագործումը պահանջում է բոլոր ուժերի և միջոցների մոբիլիզացիա, հնգամյակի ավարտական տարվա առաջադրանքների կատարման համար :

Այդ առաջադրանքների հիմքը հանդիսանում է սև մետաղագործութեան հետ մնալը, հաղթահարելը, և անպայմանորեն ածխի արդյունաբերութեան սլանի կատարումը, մեքենաշինարարութեան հետագա ծավալումը, յերկալքի տրանսպորտի աշխատանքների բարելավումը : 1932 թ. մենք պետք է հաչենք 10 միլիոն տոնն թուջ, հանենք 90 միլիոն տոնն քարածուխ, մեքենաների արտադրութեանը հասցենք մինչև 6,8 միլիարդ ուրբու :

Այդ առաջադրանքների հիմքը հանդիսանում է սլաթարը կոլտնտեսութեաններին կազմակերպչական տնտեսական ամբողջման, գյուղատնտեսութեան և անասնապահութեան հետագա վերելքի համար :

Գյուղատնտեսութեանը բարձր աստիճանի բարձրացնելու, անասնապահութեան սլորբելմի լուծման և բանվորների ու աշխատավորութեան մատակարարման լավացման գործում խոշոր նշանակութեան ունեն կուսակցութեան կենտկոմի և ժողկոմխորհի վերջին վորոշումները «1932 թ. բերքից հացամթերում կատարելու սլանի և կոլտնտեսութեան հացի առևտրի ծավալման մասին» և «անասնամթերման և կոլտնտեսութեաններին, կոլտնտեսականներին և անհատական աշխատավոր գյուղացիներին մսի առևտրի մասին» :

Կուսակցութեան վորոշումները հացի և մսի առևտրի մասին կայուն պատվանդան են ստեղծում և առավելագույն չաչիով կոթանդակեն կոլտնտեսութեաններին, կոլտնտեսականներին և անհատ գյուղացիներին լայն նախաձեռնութեան ու տնտեսական ինքնագործունեյութեան զարգացման հացահատիկային տնտեսութեան հետագա բարձրացման և անասնապահական սլորբելմի լուծման գործում :

Այդ նույն վորոշումները կարևոր նշանակութեան ունեն աշխատավոր լայն մասսաներին սլարենային մատակարարումը լավացնելու գործում :

1932 թ. համար սննդի արդյունաբերութեան շինարարութեան խոշոր ծրագիր և նչված, վորի իրագործումը հնարավորութեան կտա ավելի լրիվ բավարարել աշխատավորութեան պահանջները :

Հնգամյակի շորբորդ ավարտական տարում կկառուցվեն 25 չաքարի գործարաններ, 57 մսի կոմբինատներ, 22 կոնսերվի գործարաններ, 49 Փարբիկա-խոհանոցներ և այլն :

Այս խնդիրներին կատարումը պետք է սլաշույված լինի բանվոր դասակարգի և կոլտնտեսականներին ստեղծագործական ակտիվութեան նոր վերելքով, սոցմրցման և հարվածայնութեան հետագա աճումով, բնկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքների լրիվ և անչեղ կատարումով : Այս տարվա ծրագրով մենք ավարտում ենք առաջին հնգամյակի իրագործումը շորս տարում, վերացնելով մարդը մարդուն շահագործելու հիմքերն ու սղբյուրները, կենդանի կերպով ցուցադրելով սոցիալիստական սխտեմի տնտեսութեան առավելութեանը կապիտալիստականի նկատմամբ :

Առաջին հնգամյակի իրագործման հաջողութեանները պատվանդան են ստեղծում իՍՂՄ-ում սոցիալիզմի հետագա ավելի հզոր աճման համար :

17-րդ կուսակցական կոնֆերենցիան, վորպես մեր ժամանակի պրակտիկ խնդիր, դրեց 2-րդ հնգամյակի խնդիրը—անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը :

«Յերբորդ հնգամյակի քաղաքական հիմնական խնդիրն է վերջնականապես վերացնել կապիտալիստական տարբերը և դասակարգելն ընդհանրապես, իսպառ վոչնչացնել այն պատճառները, վորոնք առաջացնում են դասակարգային տարբերութեաններ և շահագործում և հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցութեան մեջ, ամբողջ աշխատավոր բնակչութեանը զարձնել սոցիալիստական անդասակարգ հասարակութեան գիտակից և ակտիվ կառուցողներ» . (17-րդ կուս. կոնֆ. բանաձեռից) :

Յերկրորդ հնգամյակի այս կարևոր սոցիալ-քաղաքական խնդիրը կարող է կատարվել ամբողջ ժողովրդական տնտեսութեան վերակառուց-

ման, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների համար նորագույն տեխնիկական պատվանդան ստեղծելու հիման վրա, վերջ ապահովում է յերկրորդ հնգամյակում աշխատավորության նյութական կենցաղային դրուժյան հսկայական բարելավումը:

Կյանքում իրագործելով Մարքս-Լենինի ուսմունքը Խորհրդային Միությանը դնում է անդամակարգ հասարակության ճանապարհով, յերկրի ներսում և յերկրից դուրս դասակարգային անողոք կռիվի միջոցով, վորոշակի հաղթահարելով աջ և «ձախ» սպորտունիստների ընդդիմադրությունը:

Յերկրորդ հնգամյակի ծրագիրը, նոր կյանքի լայն ձևափոխներ բանալով վոչ միայն մեր, այլ և ամբողջ աշխարհի աշխատավորների առաջ, կդառնա սոցիալիզմի-կոսմոսոլիզմի դեմ՝ պայքարի դրոշ, վորի հաղթանակն ապահոված է հասարակական հարաբերությունների նոր, ավելի առաջադեմ կարգի կրողի համար:

5. «ՀՆԳԱՄՅԱԿԻ ԶՈՐՐՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ»
ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1932 թ. շինարարության հսկա պլանի կատարումը, անդամակարգ հասարակության կառուցման նոր, մեծագույն խնդիրները հետագա հինգ տարիներում-պահանջում են մեր յերկրում բոլոր միջոցները մարտնչալ մորիլիզացիա:

Սոցիալիզմի կառուցման ծրագրի հաջող իրագործման հիմնական պայմաններից մեկը հանդիսանում է կուտակումները ալրյունները ուժեղացնելը, ինչպես ժողովրդական տնտեսության մեջ, նույնպես և իրենց աշխատավորների միջոցների ներգրավման համար լայն աշխատանք ծավալելու հաշվին:

«Մենք պետք է ողտարծենք մեր յերկրի բնակչության պատ միջոցները սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման համար: Բնակչության ժամանակավորապես պատ միջոցները հսկայական կապիտալները կարող են և պետք է ընկնեն սոցիալիստական շինարարության շրջանակի մեջ, պետք է դնան սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման համար՝ բոլոր պրոլետարների և կոլեկտիվիստների բազայի և գյուղի ամբողջ աշխատավորության կամավոր մասնակցության սկզբունքներով» (Գրինկո):

Այս խնդրի կատարման կարևոր լծակներից մեկը հանդիսանում են մեր փոխառությունները, վոր մորիլիզացիայի յեն յենթարկում բնակչության միջոցներն աշխատավորության սոցիալիստական շինարարության մեջ մասնակցելու նշանաբանի տակ:

Նախընթաց փոխառությունների տարածման հաջողությունը, սոցիալիստական ինդուստրիալիզացիայի աճող պահանջները, աշխատավորության յեկամ տների հետագա աճումը հնարավորություն ստեղծեցին պետական 1932 թ. բյուջեն մտցնելու նոր մուտքեր փոխառություններից, վորոնք բարձրացնում են ԽՍՀՄ ժողովրդական տնտեսությունը և կուլտուրական շինարարությունը, պետական վարկով ֆինանսավորելու կարգը:

ԽՍՀՄ Կենտրոնական 3-րդ նստաշրջանի կողմից ընդունված 1932 թ. փոխառության տարածման ծրագիրը, ամբողջությամբ համապա-

տասխանում է սոցիալիստական ծավալուն առաջ խաղացման հարձակման խնդիրներին, բանվոր դասակարգի և կոլտնտեսականների առաջադեմ ջոկատների պահանջներին:

Խոշոր ֆարերիկաների, գործարանների ՄՏԿայանների, կոլտնտեսությունների, բանվորների և կոլտնտեսականների բազմաթիվ դիմումները կատավարության նոր փոխառության բաց թողնելն արագացնելու մասին, ժողովրդական մասսաների ցածից յեկող յուրը համոզումը սոցիալիստական շինարարության տեմպերի և ԽՍՀՄ պաշտպանունակության ամրացման ապահովման համար միջոցների հետագա մորիլիզացիայի մասին, հանդիսանում են 1932 թ. փոխառության ծրագրի հաջող կատարման գրավականը:

ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդական վորոշմամբ, աշխատավոր լայն մասսաների մեջ տարածելու համար բաց է թողնվում «հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառությունը:

3,2 միլիարդ ու փոխառության բաց թողումը հանդիսանում է մեր կուտակչության և կատավարության յենիյան քաղաքականության ցայտուն արտահայտությունը, վոր սոցիալիստական շինարարության կառուցման գործում հենվում է ժողովրդական մասսաների՝ ինքնագործունեություն, եներգիայի անսպառ ալրյունները, ԽՍՀՄ աշխատավորության, համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադի կամքի և ենտուզիզմի վրա:

«Յուրաքանչյուր բանվոր և ծառայող «հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառությանը տալիս է իր յերեք շաբաթյա աշխատավարձը» լողունգով, պետք է մորիլիզացիայի յենթարկվեն միջոցները փոխառության մեջ:

Յուրաքանչյուր բանվորի, ծառայողի, կոլտնտեսականի, մենատնտեսի, չբավորի և միջակի պատվո գործն և լինել «հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառության բաժնեգրվածները առաջին շաբաթերում:

Լրիվ կամավորության հիմունքներով, սոցիալիստական մրցման մեթոդներով, մասսայական աշխատանքի ծավալմամբ փոխառության ծրագրերը պետք է կատարվի ամենակարճ ժամանակամիջոցում:

6. «ՀՆԳԱՄՅԱԿԻ ԶՈՐՐՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ» ՓՈՒՍԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախընթաց «հնգամյակի յերրորդ վճռական տարվա» փոխառությունը բաց թողնվեց աշխատավորների իրենց պահանջով յերկու բաժիններով՝ անտոկոս—չահող, վորի մեջ փոխառության շրջանառություն ամբողջ ժամանակաընթացքում շահում են բոլոր պարտատմանը, և տոկոսային (չահող):

«Հնգամյակի յերրորդ վճռական տարվա» փոխառության տարածման արդյունքները վկայում են այն մասին, վոր փոխառության շահող ձևն ողտվում է մեծ հեղինակություն բնակչության լայն խավերում և դրա համար նպատակահարմար է այդ ձևի կիրառումը նաև նոր փոխառության կառուցման ժամանակ: ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ վորոշմամբ «հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառությունը բաց է թողնված 3,2 միլիարդ ու գումարով 10 տարվա ժամկետով—1932 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1942 թ. դեկտեմբերի 1-ը:

7. ՇԱՀՈՂ ԲԱԺԻՆ

Փոխառութիւնը յերկու բաժնից է—չահող (անտոկոս) և տոկոսաբեր (չչահող)։ Նոր փոխառութիւն շահող բաժնի տարբերութիւնը «Տնտեսական յերրորդ վճռական տարվա» փոխառութիւն նույնանուն բաժնից, կայանում է նրանում, վոր «չորրորդ ավարտական տարվա» փոխառութիւնը սահմանված են ավելի մեծ շահումներ։

Նախընթաց փոխառութիւն անտոկոս բաժնում յուրաքանչյուր հարյուր ուրբիանոց պարտատոմս կարող էր շահել 40-ից մինչև 1000 ո. նոր փոխառութիւն նույն բաժնով շահումները մեծութիւնը սահմանված է 100-ից 3000 ո.:

Այսպիսով նախընթաց փոխառութիւնում փոքր շահումը կարծում էր 40 ո., իսկ մեծը 100 ո., նոր փոխառութիւնում փոքրը սահմանված է 100 ո. և մեծը 300 ուրբի:

Մբան համապատասխան նոր փոխառութիւն շահումները դումարը գերազանցում է անցած փոխառութիւն շահումների գումարին: Յեթե անցած տարվա փոխառութիւն 100 ուրբուց պարտատոմս իր գոյութիւն ամբողջ չըջանում շահում էր միջին հաշվով 64 ո., ապա նոր փոխառութիւնը նա շահում է 104 ո.:

Շահող պարտատոմսերի ամբողջ յեկամուար վճարվում է շահումների ձևով:

Փոխառութիւն 10 տարվա ժամանակամիջոցի ընթացքում յուրաքանչյուր պարտատոմս անպայման շահում է: Շահումները 100 ո. պարտատոմսի համար սահմանված են 3000, 1000, 500, 200, 100 ո.:

Շահող բաժնով 10 տարվա ընթացքում կատարվում է շահման 40 խաղարկութիւն, տարին չորս անգամ:

Ի տարբերութիւն «Տնտեսական յերրորդ վճռական տարվա» փոխառութիւն անտոկոս շահող բաժնի պայմանները, յերբ պարտատոմս պահողը շահումն ստանալիս ստանում էր և իր պարտատոմսի արժեքը, նոր փոխառութիւնը շահման վճարումը բաժանվում է պարտատոմսի մարումից: Յեթե պարտատոմսին շահում է ընկնում, ապա նա անմիջականորեն վճարում է, իսկ պարտատոմսի արժեքը վճարվում է յերեք տարուց հետո: Պարտատոմսը հետ գնելու այսպիսի բաժանումը փոխարկութիւն է և րնակչութիւն իր պետութիւն տված վարկի ժամկետը, վոր հնարավորութիւն է տալիս բարձրացնել շահումների չափն ու գումարը:

Վարկերի ժամկետները յերկարացումն անհրաժեշտ է և նրա համար, վոր փոխառութիւնների միջոցով համարած գումարները գնում են հիմնական շինարարութիւն, նոր ֆարրիկաների, դորձարանների, խորհանուսութիւն և այլն, կառուցման վրա, վորոնք գործի յեն դըրվում միայն մի քանի տարի հետո: Այսպիսով մեր փոխառութիւնները պետութիւնը պետք է ապահովեն յերկարատե վարկով, վորն ոգտապարձվում է մեր սոցիալիստական ինդուստրացման կարիքների համար:

Շահումը վճարելուց պարտատոմսը վրեհղարձվում է պահողին, նրանում նշանակված արժեքը հետևյալ ժամկետներում ստանալու համար:

8. ՇԱՀԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՆՇՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

1-4	խաղարկութիւնում	(1 տարում)	ՎՃԱՐՎՈՒՄ Ե	1/12-36 Թ:
5-8	»	(2 »)	»	1/12-37 Թ:
9-12	»	(3 »)	»	1/12-38 Թ:
13-16	»	(4 »)	»	1/12-39 Թ:
17-20	»	(5 »)	»	1/12-40 Թ:
21-24	»	(6 »)	»	1/12-41 Թ:
25-40	»	(7 և 10 տ.)	»	1/12-42 Թ:

Վարկերի յերկար ժամկետայնութիւն ավելացումը համապատասխանում է և պետութիւն և պարտատոմս շահողի շահերին այնքան, վորքան նա հնարավորութիւն է տալիս շահումը խոչորացնելու:

9. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Տոկոսային բաժնի պարտատոմսերի ամբողջ յեկամուար տրվում է տոկոսների ձևով և ըստ կարոնների:

Պարտատոմսերին բարդվում է տարեկան 10 տոկ., տոկոսների վճարումը կատարվում է տարին մեկ անգամ, կարոններով, վոր ժամկետավորված է ամեն տարվա գեկտեմբեր 1-ի թիվով՝ սկսած 1933 թիվից:

Տոկոսային բաժնի պարտատոմսերի մարումն սկսում է գեկտեմբերի 1-ից և կատարվում է ամեն տարի մարման խաղարկութիւնը՝ 7 տարվա ընթացքում: Ամեն խաղարկութիւնում մարվում է բաժնի ¹/₁₀ մասը. բաժնի չմարված մնացած ³/₁₀ մասը հետ է գնվում 1942 թ. գեկտեմբերի 1-ից: Մարման խաղարկութիւն ժամկետներն ու կարգը, ինչպես և պարտատոմսերի հետ գնման կարգը սահմանվում է ԽՍՀՄ Ֆինտոկոմատի կողմից:

10. ՓՈՒՍԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Շահումների և մարումների խաղարկութիւնների կատարումն հեշտացնելու համար, փոխառութիւն յերկու բաժնիներն էլ բաժանվում են կարգերի, ամեն մեկը 100 միլիոն ուրբի:

Շահող բաժնի ամեն մի կարգը բաժանվում է 20 հաղար սերիայի—ամեն մեկ սերիան 5000 ո.:

Տոկոսային բաժնի ամեն մի կարգը բաժանվում է 100 հաղար սերիայի, ամեն մեկում 10 պարտատոմս: Յուրաքանչյուր մեկ ամբողջ (բաժանվող և չբաժանվող) պարտատոմսի արժեքը համարաբար է 100 ուրբու. 100 ո. պարտատոմսից գատ բաց է թողնված նույնպես ամբողջի կեքը, քառորդը և ասայիերրորդը ներկայացող (50, 25 և 10 ո.) պարտատոմսեր:

Պարտատոմսերի առաջին մասերը համարակարգված են ամբողջի միատեսակ համարով և մտնում են չըջանաութիւն մեջ ինքնուրույն: Անտոկոս շահող փոխառութիւն բաժանվող պարտատոմսի յուրաքանչյուր մասն իրավունք է տալիս ստանալ շահման համապատասխան մասը: Տոկոսային բաժնի բաժանվող պարտատոմսի յուրաքանչյուր մասն իրավունք է տալիս ստանալ պարտատոմսի այդ մասին ընկնող տոկոսային յեկամուարը, ըստ կարոնների:

Անտոկոս շահող բաժնի շահած պարտատոմսերի համարները, ինչ-

պես և տոկոսային բաժնի մարման դուրս յեկած պարտատոմսերի սե-
րիաների համարները, հրապարակվում են անմիջապես խաղարկութեան
վերջում և՛ ԼՄ, ԿԳԿ և Համառուս. ԿԳԿ «Իրավաստիա»-յում, ինչպես և
խաղարկութեան վաճառի տեղական թերթում:

Շահումների վճարումն սկսվում է թերթի հերթական յերեք հա-
մարի տասնայուց հետո, (հաշվելով այն համարից, վորում սուղված
է յեղել պաշտոնական աղյուսակը): Թերթի այդ յերեք համարներից
մեկում գետեզվում են բոլոր վերականգնող, վորոնք հայտնաբերված են
պաշտոնական աղյուսակում: Անտոկոս շահող բաժնի շահումները, ինչ-
պես և տոկոսային բաժնի պարտատոմսերի խաղարկութեան արժեքի
վճարումը կատարվում է բոլոր խնայողբարձարիկները կողմից, նրանք
են վճարում նույնպես տոկոսային բաժնի պարտատոմսերի ժամկետա-
յին կտրոնների արժեքը: Շահումների և կտրոնների վճարումը կատար-
վում է մինչև 1947 թ. դեկտեմբերի 1-ը:

11. ՄԱՍՀԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻՆ

Փոխառութեանները միջոցով ստացված գումարները գնում են խոր-
հրդային պետութեան անտեսական միջոցառումների իրականացման
մէջ արդյունաբերական գիշտոնների կառուցման, տրանսպորտի և
այլնի վրա:

Այս միջոցները վոչ պակաս մասն ուղղվում է տեղական նշանակու-
թեան ունեցող անտեսական շինարարութեան (հիվանդանոցներ, դպ-
րոցներ, ճանապարհային շինարարութեան և այլն):

«Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» նոր փոխառութեամբ
դաշնակից հանրապետութեանները բյուջեներին մասհանվում է, հան-
րապետական տերիտորիաում բանվոր ծառայողները մեջ իրացված
փոխառութեան գումարի 15 տոկոսը: Տեղական բյուջեներին է մաս-
հանվում քաղաքի և գյուղի բնակչութեան բանվոր ծառայողների մեջ
իրացված գումարի 10 տոկոսը և այլ բնակչութեան մեջ իրացված է 25%:

Քաղաքներում և քաղաքատեղ վայրերում այդ մասհանումներն
ամբողջութեամբ մուտք են լինում այդ քաղաքների և վայրերի տեղա-
կան բյուջեները: Գյուղական վայրերում այդ մասնահանումները բաշխ-
վում են շրջագործիկների միջոցով շրջանային և գյուղական բջիջնե-
վում մեջ այնպես, վորպեսզի յուրաքանչյուր գյուղխորհուրդի բյուջե
մուտք լինի իր գյուղխորհուրդի տերիտորիայի մեջ իրացվող պար-
տատոմսերի գումարի վոչ պակաս 15 տոկոսը:

Կասկածից դուրս է, վոր «Հնգամյակի ավարտական տարվա» փո-
խառութեան այս պայմանները պետք է ել ավելի ներգրավեն աշխա-
տավոր մասսաներին փոխառութեան բաժնեգրվելու համար և ոժանգա-
կեն փոխառութեան հաջող տարածմանը:

Յուրաքանչյուր բանվոր աշխատավոր և գյուղացի, պետք է գի-
տակցի, վոր իր մասնակցութեանից փոխառութեան ձեռք բերելուց ինչ-
պես իր, նույնպես և ամբողջ կոլեկտիվի մասնակցութեանից է կախված
Ֆարքիլանքերի, գործարանների, դպրոցների, հիվանդանոցների, խորհ-
մանտոմսերի կտրոնների և կոյնտեսութեանների շինարարութեան նախա-
դրված պլանի կատարումը, ինչպես ամբողջ Սորհրդային Միութեան-
ում, նույնպես և այն վայրում, ուր ինքն ապրում է:

12. ՓՈՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

Բաժնեգրութեան ժամկետը «Հնգամյակի չորրորդ ավարտական
տարվա» տարածման կամպանիան քաղաքային և գյուղական բնակչու-
թեան մեջ սկսվում է 1932 թ. հունիսի 10-ից:

Բաժնեգրութեան ձևը: Նախընթաց մասսայական փոխառութեան-
ների իրացման, կամպանիաների որինակով «Հնգամյակի ավարտական
տարվա» փոխառութեան տարածումը կտարվի կոլեկտիվ բաժնեգրու-
թեան ձևով—մաս—մաս—մուծումով, ինչպես և պարտատոմսերի կան-
խիկ հաշվով վաճառելու ձևով:

Կոլեկտիվ բաժնեգրութեանն բնորոշում է քաղաքային կազմա-
կերպված բանվորներին, պետական հիմնարկներին, կոոպերատիվ և
հասարակական կազմակերպութեանների ծառայողների կազմերը և
կոլեկտիվացված գյուղերի լայն մասսաները: Կոլեկտիվ բաժնեգրու-
թեանը պետք է տանել նաև քաղաքի անկազմակերպ աշխատավորական
մասի, ինչպես և նրանց խնամքի տակ յեղած անձանց մեջ, վորի համար
պետք է ոգտագործվեն նրանց միավորող մասսայական կամ կենցաղա-
յին միավորումների ձևերը:

Կոլեկտիվ բաժնեգրութեան մեջ մասնակցելու իրավունք ունեն
բնակչութեան հետևյալ խմբերը.—

ա) Բանվորներն ու ծառայողներն իրենց ձեռնարկութեաններին—
հիմնարկութեանների և կազմակերպութեանների միջոցով:

բ) Կոյնտեսականները—ոժանգակ հանձնաժողովների և կոյնտես-
ութեան վարչութեան միջոցով:

գ) ԲՎԿԻ, ՄՊԿՎ, պահակային զորքերի և միլիցիայի մասերի,
հիմնարկների և մարմինների անձնական կազմը:

դ) Արտեյների և տնայնագործական կոոպերատիվային մեջ կազմա-
կերպված տնայնագործները, իրենց կոոպերատիվ միավորումների մի-
ջոցով:

ե) Առանողութեանն իրենց ուսումնական հիմնարկների միջոցով:

զ) Պետական թոշակ ստացող անձինք, իրենց թոշակ տվող հիմ-
նարկներին (խնայողբարձարիկների) միջոցով:

է) Այլատ արհեստի անձինք, նրանց միավորող կազմակերպութեան-
ների միջոցով:

ը) Լիտրական իրավունքից սղտված անկազմակերպ քաղաքային
բնակչութեանը, բնակ. բնկերութեանների, տրեսանների, վարձակալա-
կան բնկերութեանների, բնակչինկոոպների, ինչպես և բնակ-վարչու-
թեանների միջոցով:

Աշխատավորութեան կազմակերպված մասի մեջ կոլեկտիվ բաժնե-
գրութեանը կատարվում է հիմնարկներին, ձեռնարկներին, բանակի և
նավաստի մասերին, դպրոցներին, տնայնագործների միավորումնե-
րին, խորհմանտեսութեաններին, կոյնտեսութեաններին և այլն կից
ոժանգակ հանձնաժողովների միջոցով: Իսկ բնակչութեան անկազմա-
կերպ մասի մեջ հատուկ լիազորների միջոցով:

Բնակարանային չհամայնացրած ֆոնդում ապրող քաղաքային ան-
կազմակերպ բնակչութեան բաժնեգրութեան անցկացնելու համար, նման
լիազորներն առանձնացվում են տեղական խորհուրդների, սեկցիաների
կողմից:



28078

Կուրեկտիվ կերպով բաժնեգրվող բանվորներին, ծառայողներին, տնայնագործներին և քաղաքային անկադամակերպ բնակչությանը փոխառութեան բաժնեգրութեան գումարը մաս-մաս վճարելու համար, արվում է 10 ամիս մաս-մաս վճարման ժամկետ այն հաշվով, վոր պարտատոմսերի վերջնական վճարումը կատարվի վրչ ուչ 1933 թ. մայիս 1-ից :

13. ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱԾԵԼ ԱՄԵՆԱԿԱՐՃ ԺԱՄԿԵՏՈՒՄ

Սոցիալիզմի կառուցման բայլչեիկյան պլանի կատարումը պահանջում է աշխատանքի տեմպերի ուժեղացում, բոլոր ուժերն ու ժիջոցներն ավելի շատ մորելիդացիա անել հնդամյակի չորրորդ ավարտական տարվա խնդիրների կատարման համար :

Սորհրդային Միությունը գործնականում ցույց ավեց, վոր նա ունի բոլոր անհրաժեշտը և բավարարը, սոցիալիստական կառուցման համար, սոցիալիստական շինարարութեան հիման վրա, մեր յերկրի տեխնիկական և տնտեսական անկախությունն ապահովելու համար :

Մեր աճումը և կապիտալիզմի ճգնաժամը սրում և խորացնում են յերկու իրար հակառակ տնտեսական սիստեմները հակասությունները :

Իմպերիալիստները պայքարում են աշխարհի նոր բաժանման համար, յուրաքանչյուր կապիտալիստական յերկիր, աշխատում է ճրդնաժամից դուրս գալ ուրիշի հաշվին, իսկ բոլորը միատեղ՝ Սորհրդային Միութեան հաշվին :

Նոր պատերազմի սպառնալիքի առաջ աճում են հեղափոխական ուժերը, աճում է մեր յերկրի աշխատավորութեան անհաղթ կամքը, սոցիալիստական շինարարութեան հետագա աճման, սոցիալիզմի վերջնական կառուցման համար :

Աշխատավոր լայն մասաների այդ կամքը, այդ ենտուղիազմը կարող է և պետք է իր արտահայտությունը գտնի «հնդամյակի ավարտական տարվա» փոխառութեան, իսկապես հարվածային, բայլչեիկյան տեմպերով բաժնեգրությունը տանելու մեջ :

Նաք փոխառութեան միջոցներով ուժեղացնենք սոցիալիզմ կառուցող յերկրի փիւնանական հզորությունը :

336.5
2-672

Սրբոգրեցին՝ Տ. ՏԵՐՈՒՆԻ և Ե. ՀԵՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ Ի Տ Պ Ա Ր Ա Ն